

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Տիգրան Գրիգորյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Ինսբրուկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Արտակ Զեյնալյան և Տիգրան Գրիգորյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Ինսբրուկ), 2018թ. հուլիսի 12-13-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միության խորհրդում Ավստրիայի Հանրապետության նախագահություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ԵՄ և Արևելյան գործընկերության ներքին գործերի և արդարադատության նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ ԱլԳ երկրներում իրավունքի գերակայության ամրապնդմանը, դատական իշխանությունում կոռուպցիայի դեմ պայքարի առավել արդյունավետ մեխանիզմներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2018թ. հուլիսի 12-ից 13-ը Ավստրիայի Հանրապետությունում (Ինսբրուկ) կայացած ԵՄ և Արևելյան գործընկերության ներքին գործերի և արդարադատության նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցել են ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը և ՀՀ

արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Տիգրան Գրիգորյանը:

ԵՄ և Արևելյան գործընկերության ներքին գործերի և արդարադատության նախարարների ոչ պաշտոնական հանդիպումը կազմակերպվել է Եվրոպական միության խորհրդում Ավստրիայի Հանրապետության նախագահության շրջանակներում, որին մասնակցել են Արևելյան գործընկերության երկրների արդարադատության և ներքին գործերի նախարարները, Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության և այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ:

ԵՄ և Արևելյան գործընկերության ներքին գործերի և արդարադատության նախարարների ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել ԵՄ արդարադատության, սպառողների և գենդերային հավասարության հարցերով հանձնակատար Վերա Յուրովայի, Ավստրիայի Հանրապետության արդարադատության նախարար Յոզեֆ Մուերի, ինչպես նաև Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի ղեկավար Մարտին Կրոետների հետ:

ԵՄ արդարադատության, սպառողների և գենդերային հավասարության հարցերով հանձնակատար Վերա Յուրովայի հետ հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ներկայացրել է 2018թ. մայիսին ՀՀ-ում թավշյա հեղափոխությունից հետո նոր ձևավորված կառավարության առաջնահերթությունները, մասնավորապես, անդրադարձ կատարելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տարվող աշխատանքներին, ընտրական օրենսգրքի բարեփոխումների անհրաժեշտությանը: Կողմերը քննարկել են նաև արդարադատության ոլորտի բարեփոխումներին ուղղված Եվրոպական միության հետագա աջակցության հնարավորություններին առնչվող հարցեր: Հանդիպման ավարտին ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ԵՄ

արդարադատության, սպառողների և գենդերային հավասարության հարցերով հանձնակատար Վերա Յուրովան հրավիրել է այցելել Հայաստան:

Հարկ է նաև նշել, որ Ավստրիայի Հանրապետության արդարադատության նախարար Յոզեֆ Մոսերի և Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի ղեկավար Մարտին Կրոետների հետ կայացած աշխատանքային հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ և բազմակողմ համագործակցության ձևաչափերի ընդլայնմանն ու խորացմանն առնչվող մի շարք հարցեր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

01.08.2018

X



Artak Zeynalyan